ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

ԱՐՇԱԿ ՔԵՐՈԲՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԲՏԱ նախարարության թվայնացման վարչության փորձագետի կողմից 2025 թվականի հուլիսի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում իրականացված աշխատանքների վերաբերյալ

1. «Արհեստական բանականության վիրտուալ ինստիտուտ» նախաձեռնության շրջանակում իրականացվել է մասնակցություն ՀՀ կառավարության «Պետության կողմից արհեստական բանականության ոլորտում բարձր արտադրողականությամբ հաշվողական ռեսուրսների հասանելիության տրամադրման փորձնական ծրագիրը և կարգը հաստատելու մասին» որոշման նախագծի մշակման գործընթացին:

   Ինստիտուտի պաշտոնական կայքի ստեղծման և զարգացման ուղղությամբ իրականացվել են բանակցություններ «Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալություն» հիմնադրամի հետ, ինչպես նաև կայքի տեխնիկական և բովանդակային աշխատանքները՝ համահունչ «Հենակետ v.1.1.1» պաշտոնական դիզայն համակարգին:

   Նախատեսվել և իրականացվել են կայքի համապատասխանեցման աշխատանքներ «Վեբ բովանդակության մատչելիության ուղեցույցի» (Web Content Accessibility Guidelines, WCAG 2.1) **AA** մակարդակի ստանդարտներին:

2. «Անվտանգ SS ենթակառուցվածքի և լիցենզիաների կառավարման համակարգի ներդրման» պիլոտային ծրագրի շրջանակում աշխատանքային հանդիպումների կազմակերպում՝ նպատակ ունենալով ապահովել ծրագրի արդյունավետ իրականացումը, կողմերի միջև համագործակցության հստակեցումը և առաջիկա գործողությունների համադրումը: Հանդիպումների ընթացքում քննարկվել են համակարգի ներդրման գործընթացի կազմակերպչական, տեխնիկական և իրավական ասպեկտները, ինչպես նաև աշխատանքների փուլային ընթացքը:

Իրականացվել է հանդիպումների արդյունքների ամփոփում համապատասխան արձանագրություններում, որտեղ արտացոլվել են ընդունված որոշումները, սահմանված առաջադրանքները և դրանց կատարման ժամկետները:

3. Միջազգային համագործակցության ամրապնդման շրջանակում մասնակցություն **UN ESCAP-ի** առցանց հանդիպումներին՝ ծանոթանալու միջազգային լավագույն փորձին և ներգրավվելու թվային կառավարման քաղաքականությունների մշակման գործընթացներին:

3.1 «Informal Drafting Group for the APIS action plan 2027–2030» աշխատանքային խմբի շրջանակներում «APIS action plan 2027-2030» փաստաթղթի մշակում, առաջարկների ներկայացում:

3.2 Մասնակցություն «feasibility study of the Digital Solutions Centre for Sustainable Development» ժամանակավոր աշխատանքային խմբի հանդիպումներին՝ անկախ իրագործելիության ուսումնասիրության արդյունքները թափանցիկ կերպով վերանայելու և Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում գործնական թվային լուծումների փոխանակումը ամրապնդելու համար ճանապարհային քարտեզ առաջարկելու համար:

3.3 Մասնակցություն "Asia-Pacific Information Superhighway (APIS) Working Group 2 Policy Brief on Government Technologies and Innovations" աշխատանքային խմբում՝ տարածաշրջանային թվայնացման ռազմավարությունները քննարկելու նպատակով:

4. Իրականացվել են էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության «Mullbery» համակարգով հանձնարարված աշխատանքները, ապահովվել է էլեկտրոնային փոստով ստացված նամակների վերաբերյալ հետադարձ կապը: Կատարվել են նաև ընթացիկ հանձնարարականներ, որոնք բխում են աշխատանքային պարտականություններից՝ սերտ համագործակցությամբ նախարարության համապատասխան վարչությունների հետ:

5. Թվայնացման վարչության ընդհանուր աշխատանքների համակարգում, հանդիպումների կազմակերպում այլ գերատեսչությունների, կազմակերպությունների և քաղաքացիների հետ, ակտիվ կապ նախարարության տարբեր վարչությունների, պետական կառույցների և միջազգային կազմակերպությունների հետ:

ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԵ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՓՈՐՁԱԳԵՏ՝

01.10.2025թ.

Հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքները գնահատում եմ

ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ԱՐՇԱԿ ՔԵՐՈԲՅԱՆ

01.10.2025թ.